

ՄԵՐ ՄԻԶՆԱՄԹԱՐՑՄՆ ԳՐԻՉՆԵՐԸ¹

Գրիչների վրա ծանր տպավորություն էն թողել Հաճախակի կրկնվող համաձարակները, «մահարաժամֆները» և մյուս բնական պատահարները:

1549թ. դրած մի հիշատակարանում Հաճախարակի մասին հետեւյալն է՝ արծանագրված. «Ի թուականիս Հայոց, որ էր ԶՂՂ 1548 ամի, որում մղեւ մահարաժամֆ աշխարհիս Հայոց. եւ շատ տուն աւելիցաւ, եւ շատ ասլրանք անտէր մնաց. զեհով ոչխար մնաց, շատ գրւթան խափանաւ, քանի Հայր առանց որդի մնաց, եւ մայր առանց դստեր եւ եղբօյր մնաց: Հջնց որ կալոյ ժամանակն եղեւ, տղայ չկայր որ զկամս քշեր» (ՀՍՍՌ Մատեն. №554):

Ներկարար Եսային իր 1728թ. դրած Հիշատակարանում «մահարաժամֆնի վը նասները հետեւյալ մեռվ է նկարագրում. «Ի՞՛ 1728. եղեւ խիստ մահարաժամֆ, որ մինչեւ մեց ամիս ոչ դադարեցաւ. շատ Հայրք անորդի մնացին, եւ շատ մայրք անդուստր մնացին, եւ շատ գրւոնք փակեցան» (ՀՍՍՌ Մատեն. № 6433,թ. 217.:

Մահարաժամֆից պակաս մնաս չի պատճառել երկրաշարժը, որի առանձին դեպքերի հիշատակությունները հանդիսանում ենք հիշատակարաններում: Դուլողի Երզնկացին երկրաշարժի պատճառով թաղել է մորն ու տղային և իր խեղճության մասին հետեւյալն է դրում:

«Ծօ՛, Ղուլողի Երզնկացի,
Քեզ ի եղեր խել մի զիամ,
Դու ես եղեր խեղն ու զերի,
Հողին ես դրել մայրն ու տղան»:

Հիշատակարաններում գրիչները համախառապատվում են սովոր, մկան հասցը-

րած վնասների և այլ բնական պատահարների համար: Այսպես, օրինակ, ՀՍՍՌ Մատեն. 2444 ձեռագրի ուսանալոր հիշատակարանում գրիչը հետեւյալն է դրում.

«Ի թիւ հազար հարիւր վարսուն, նրկու աւել ի հետ ի նոյն, նկատ մարախի բազում անհուն, ի հաղաքին երեւանոյն,

Մաթկիս եղեւ երես օդոյն, նիեղ երկնից իրեւու զիւն, Թռաւ իշաւ մէջ արտերուն, Սկսաւ ուտել իրեւու զուն: Մահն եկաւ ի նոյն տարին, Հաւասարեաց ամեն տեղոյն, Խիստ կոտորեաց մասուր ու մեծոյն, Փառս տացուն ի Աստծոյն: :

Սովոր եկաւ ի նոյն տարին, Խոնն շահի եղաւ զարին, Սովոր փարդեց դաշտոյ տարին, Աստուած փրկէ եկող տարին: Սովոր եկաւ ի նոյն տարին, Հայոց դամբան յախիր արին, Խոն չմնաց քնաւ ի տարին, ել չտեսնեն այսպէս տարին»:

Անհրաժեշտ է նաև ընդգծել մեր գլուխների ծայրահեղ համեստությունը: Երբ բանց հիշատակարաններում դուք երրեք չէք տեսնի, որ գրիչը չեւտ զնի եսի վրա և կամ, ընդհանրապես, խոսի իր արժանիքների մասին և գոյլի իրեն: Բնդհակառակը, նրանք բիթին դարերին հատուկ ձևերով դիմում են բացահայտ ինքնանվաստացման և ինքնաստորացման: Հիշատակարաններում հաճախ կարելի է հանդիսական այնպիսի դարձվածքների ինչպիսին՝ «Եղելի գրչակը», «Քաղմամեղ մեղավոր», «Հողնառեկ ծրող», «անիմաստ տրուպս», «սուտանուն

գրչիս», «փծունա», «յոյլ եւ ծոլս» և այլն։ Տասնյակ տարի շարունակ մարդը նստել, տքնել է մի ձեռագրի վրա, մարդկային համբերության և նստակեցության ամեն տեսակ սահմաններից դուրս, տառ տա տառ, կարելի է ասել, ոչ թե զրել, այլ նկարել է և ավարտել իր մարդարտաչար ձեռագրիրը և վերջում դեռ «փծո՞ւն» և «ծո՞ւլը» է անվանում իրեն։

Ձեռագրերի հետ դործ ունեցող անձնավորությունը չի կարող պատկանանքով շըցքել դեպի գրելսները, երբ ուղրւմ է պատկերացնել այն խոշոր աշխատանքը, որ նըրանք թափել են ձեռագրերի վրա։ Նըրանք ամիսներ, երբեմն անգամ տարիներ ին նըրտել մի ձեռագրի վրա, աչքի լույս թափել և մեծ համբերությամբ ու խնամքով գրել են այն։

1248 թվին գրված մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչը նորմալ պայմաններում 32 օրվա ընթացքում, աշխատելով ամբողջ օրը, գրել է ընդամենը 93 թերթ, միջին հաշվով, օրական երեք թերթ (տե՛ս ՀՍՍԾ Մատեն. №1340)։ Մեր Մատենադարանում կան այսպիսի մեծածավալ ձեռագրեր («Հայոմաւուրք»-ներ, «Հարանց վարք»-եր, «Ճառընտիր»-ներ և այլն), որոնք գրվել են տաճայակ տարիների ընթացքում։

Մաթելոս գրիչն իր 1378 թվին ավարտած «Հարանց վարք»-ի հիշատակարանում հայտնում է, որ նա այդ ձեռագրիրը գրել է յոթ տարվա ընթացքում։ Հայունակի սիրով գրեցի դամս եօթն» (ՀՍՍԾ Մատեն. №2680)։

ՀՍՍԾ Մատեն. №4472 ձեռագրի հիշատակարանից երևում է, որ գրիչն իր ձեռագրիրը գրել է հինգ տարվա ընթացքում։ «Եւ գիտելի է, զի սա սկսաք ԶԱ (901) թուականին Հայոց», գրում էր նա, «Եւ աւարտեցաք ԶԶ (906) ...»։ Գրելու ժամանակի երկարացման պատճառը մասում պիտի բացարել քաղաքական անբարենպաստ պայմաններով։ Այդ մասին հիշատակագրերը, նշում է. «...զի յիշատակարանի հետ կարգի ոչ զնայոյն անմեղակիր լերուց, երբ սիրան մաշխուլ լինի, տչքն լուս պակաս

կու հայի»։ Հիշատակագրերը մերջում դառնացած ալենլացնում է. «Մարդ զմարդույց ցաւ չլիւսէ՝ կէս զիշերին ժամ կու ձենէ»։

Մեր Մատենադարանում կան ձեռագրեր, որոնց վրա աշխատել է մ'չ թե մեկ, այլ մ'ի քանի գրիչ։ Սկսել է մեկը, բայց մահացել է և ձեռագրերը թերի է մնացել, երկրորդն է սկսել, մահացել է, դարձյալ ձեռագրերը թերի է մնացել. և վերջապես, երրորդին է միայն հաջողվել ավարտել ձեռագրերը։ Եվ գրիչներից ամեն մեկը թողել է իր հիշատակարանը։ Հիշատակարաններից երեսում է, որ ձեռագրերը միջին դարերում բավական թանկ են դնահատվել։ Նյութի դժվար ձեռք բերելու հանդամանքը և նրա թափած մեծ աշխատանքը սիպտակացնելը՝ և կոկելը՝ բնական է, թանկացել է ձեռագրիրը։

1668 թ. ընդօրինակություն ունեցող մի ձեռագրի հիշատակարանից երևում է, որ ձեռագրերը վաճառվել է երկու եղան, երկու ձեռւ և մեկ կոմիտ։ Հիշատակարանում ասված է «Դարձեաց յիշեցէք զգնող սուրբը աւետարանին՝ զՄարդարիոն», որ ետ երկու եղ, երկու ձի, կով մի եւ էառ յիշատակը...» (Արթիկի ավետարանը)։

ՀՍՍԾ Մատենադարան 212 (նոր ցուցակով) ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Դարձեալ յիշեցէք եւ Աստուածութիւնի ասացէք Մուրաս Բաշխուն եւ հօրեղբօրն, Անդրէասին, որ տուին խրեանց հալալ վաստակոցն կով մի՝ Ե է փափասի։ Տուին, ազատեցին յանաւրինաց եւ ի զերութեանց»։

Անհրաժեշտ է նշել, որ անցյալում մեզ մոտ ձեռագրերը պաշտամունքի առարկա են դարձել։ Ձեռագրերի վրա նրանք նայել են ո՛չ որպես անշունչ մի իրի, այլ կենդանի էակի վրա։ Հիշատակարաններում երբեք չեն ասում՝ թե ձեռագրերը թալան տարսն կամ ձեռագրերը թալանից աղատեցին։ Ձեռագրերն, առում են, զերի տարան, ձեռագրերը գերությունից աղատեցին։ Մենք մեր Մատենադարանում ունենք ձեռագրեր, որոնք գերության միջ են եղել մի քանի անգամ և զերությունից աղատեցին են չնորհիվ տանձին բարերարների միջամտու-

թյան և նյութական օժանդակության։ Մեզ հասած շատ ձեռադրելի իր ժամանակին առանձին համայնքների, առանձին տոհմերի սեփականություն ևն հանդիօսցել և որպես ավանդական սրբություն փոխանցվել են սերնդից սերունդ։ Մենք փաստեր ունենք, որ մեր տաճակահայ եղբայրներն առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ վախչելով կոսորածից, երթեմն չկարողանալով իրենց հետ վերցնել իրենց ամենահանհրաժեշտությունը ու թանկարժեք իրը, աշխատել են ազատել իրենց տոհմական սրբությունը՝ ձեռագիրը։ Մի շարք այդպիսի ձեռագրեր են գրանցված մեր Մատենադարանի նոր ժողովածվություն։

Հիշատակարաններում մեկ մեկ պատահում, են և գրիչների կտակներ։ Գրիչների այդ կտակները շատ համեստ են, նրանք զալիք սերնդից շատ բան չեն խնդրում, նրանք խնդրում են լսով պահել ձեռագրերը, չեղատուել և առ ու ծախի առարկա չդարձնել, նրանք։

Մարգար գրիչն իր 1701 թ. գրած հիշատակարաններում խնդրում է. «...զայս աղերսնել ի մեջապարագ գրչէն՝ լաւ ի միա առնէք... գրոյս խնամ տանէք եւ յամենայն վնասակար իրաց պահէք զսա՝ ի հրոյ, ի ջրոյ, ի հիւթոյ, ի մոմ կաթելոյ, եւ այլ ամենայն վնասու պահէք սրբությամբ, երկու երեք լաթով պատեալ...» (ՀՍՍՌ Մատեն, №33)։

ՀՍՍՌ Մատենադարանի 2394 ձեռագրի տաղարանի գրիչը իր ընթերցողներին հետևյալ խրատն է տալիք։

«Ո՞վ սիրելի եղբայր ըր ես,
Զայս քեզ խրատ տամ որ լսեմ,
Յորժամ դուռըս եղանակես,
Զթուրտըն թքով չաղականես,
Զկողն անողորմ յետ չի պարզեն,
Հանց որ կապին վնաս դործեն,
Կամ անդէսին ձեռըն դնես,
Խոզանաց մարդկան կոխան
Հինես...»

Ի ոոզ պաթերն վայր չի ճգես,
Կամ երկու մարդ յանես քաշես,
Կամ ի մերան գինի վաթես,
Կամ եղ եւ մոմ կաթեցընես,

Այլ յոյժ սիրով նախախնամես,
Սրբեալ ձեռոք, լաթով բռնես,
Ի հրոյ, ի ջրոյ ի զատ պահես,
Ի կ չորացին տեղի դընես.
Զմեղապարտ գրիչըս իիշես...» (թ. 4բ-նա)։

ՀՍՍՌ Մատեն. №5597 ձեռագրի հիշատակադիրը, ձեռագրից օդապողներին զգուշացնում է ուշադիր լինել «...յամենայն դժբաց զսա, ի ցեցոյ եւ ի կերչաց, եւ ի հիւթոյ, եւ յամենայն վամբոզաց դվայիշ չութիւն դորա», և խնդրում է զմիանդամայն եւ վերաբկուածածկությամբ հոդաբացես զմա՝ որպէս իմաստուն վաճառական պատուական՝ պատուական մարդարտաց»։

Աստվածատուր գրիչն իր 1674-թ. ընդօրինակած ուսանավոր հիշատակարանում հետեւյալն է խնդրում։

«Ով դու մանուկ սիրով բանի,
Յինէն պատուէր քեզ այս լինի,
Յորժամ ընթերցման պատշաճ լինի,
Խնամով բռնես եւ զգուշալի...
Ի հրոյ, և ի ջրոյ, և ի կաթիւթի
Ի այլ ամենայն ամմաքուր բանի» (ՀՍՍՌ Մատեն. № 7046, [թ. 366])։

Գրիչների պատմվերերից մինն էլ, ինչպես ասացինք, այն է, որ ձեռագրերը հետազոտություն առ ու ծախսի առարկա չըառնա։ 1442 թ. ընդօրինակած մի ձեռագրի ուսանավոր հիշատակարանում կարդում ենք։

«Իշխանութիւն ոչ ոք չունի
Տալ դրաւական վասն արծաթի,
Կամ վաճառել ընդ քանքարի՝
Զի է յազատ ամենայնիք» (ՀՍՍՌ Մատեն. № 62)։

Կիրակոս գրիչն անիծում է բոլոր նըրանց, ովքեր կանոնակնեն ծախել, գողանալ կամ գրաւ դնել ձեռագիրը, «Մի ոք իշխեցի զսա ծախել կամ գողանալ կամ գրաւել, եւ թէ ոք յանդընի դողանայ կամ ծախէ կամ գրաւէ՝ զաղատիմն Յուռայի առնու...» (ՀՍՍՌ Մատեն. №958)։

Թէ ինչպես են գրիչները նայել իրենց պրաֆեսիալիտի վրա և ինչպես են գնահատել ընկանրապես իրենց աշխատանքը, այդ պարզ կարելի է տեսնել 1298 թվի բառիւ

զբանական մի ստանավոր հիշատակարա-
նից :

Հիշատակարանի սկզբամ, Բարսիլը հայտ-
նում է, որ փող չամեր ուրիշներին գրել
տալ, տասդի և ինքն էստիլված եղել դրել
«Բանքար չպոյր զի վարձէի»,

Մատամբ քանի՛ ես դրէե...»:

Այսուհետեւ տարակուասնքի մեջ է ընկեցած՝ թե արդ ձեսազբերը, որ գրում է, ի՞նչ օգուտ ունի, երբ նրանք վերջնեւ հաշվան իրեն չեն մնաբու.

«Յայս միջոցին (այսինքն գրելու միջոցին) անձն խմ կոծի,

Եւ վարանի յամենայնի՝
թէ զի՞նչ օգուտ ինձ յայս ջանի՝

Որ ընթեռնուալ ինձ ոչ լինի...»:
Շարունակության մեջ հուսագրում է

«Մի յուրա միայն զերոյս թողի,

թէ եկելոց վայել մինի...»:
Վերջում նա դիմում է դայիք սերունդ-

ներին և ձեռագիրը հիշատակ թողնում նը-
րանդ՝ «քարի գալերիու» համար:

«Թող դաստիարակ ցանկալի,
Զենի, Եկեղեցու մամլէ բարի»

(ՀԱՍՈՒ Մատեն. № 418):

բը գրելու ժամանակներից : Տպագրական
տեխնիկան վոխարքինելու և կազմ զրիչներին
և աստիճանաբար դուրս մղեց նրանց առ-
ատակենիս : Այեան էին սեռունդները ու

բիշների ջանքերը Երեք մուտքության
չմասնեցին: Այժմ Սովհետական Հայաստանի
մեր մայրաքաղաքում, Երևանում, ուր
կենարունացված են աշխարհում մեզ հասած
հայերեն ձեռագրերի կեսից ավելին, ովք-
րիշների մեզ թողած ավանդները պահպատ
են մեծ խնամքով և ուշադրությամբ: Զե-
ռագրի հիման մրաց վիճակին բազմաթիվ
հաստատություններ ուսումնասիրում են
հին և միջին դարերի պատմությունը և
մեծ չափով օպտագործում գրիշների հիշա-
տակարանները:

Եվ ամեն անդամ մաղաղաթի կամ խունցացած թղթի ձեռապէրը թերթելիս մենք պատկառանքով ենք հեշում գրիչներին՝ անցյալի մեր մատենադրության այս վաստակավոր և մերժվածան աշխատողներին :

Եվ մեր ականջին շատ անուշ է հնչում
ժողովրդական մեծ բանաստեղծ ակադեմի-
կոս Ավետիք Խոսհակյանի մեր պատմիչ-դլ-
րիչներին անիրած քառակիր:

«Մեր հոյակապ հին վանքերի մութ
խուցերում, մենության մեջ,
Պատմիչները մեր վշտահար, մեզմ
կանթեղի բաւող անշեց,

Մի նշանաբուլ, մի կում ջրով և ճղնու-
թյամբ գթշերն անքուն,
Պատմությունը մեր զբացին մալաղաթի
վրբա գեղույն...»
(Ալ. Խառնակյան, Ընտիր երկեր, I
հատ., Խոհեմ 1939, էջ 278):

ՊՐՈՅ. ԴՈԿՏ.Ի.Շ. Ա.ԲՐԱՀ.Ա.ՄԵՍԱՆ.

(Գերազանց շնորհվոր Խարիբրդի զիտ. քարտուղար)